

Lucy

663

17

18

19

2009

643

Հայ

663

սու.

643

ԳԱՐԻԲ ՄԶԵՖԻՆ

Պ Ա Տ Կ Ե Ր

Ա. ՊՈԼՍԻ ՀԱՅ ՊԱՆԳԱԽԽԾՆԵՐԻ ԿԵՍՆՔԻՑ



Կուկազենց Աւօն՝
Խոգով մարմնով կուրիսաւ:

Պանդ. վաճեցիա.

1583



Թ. Ի Գ Լ Ի Ս

Յպ. Ար. Շարամակի. || Տիպ. Մ. Շարաձե.

1894

Дозв. ценз. Тифлисъ, 2-го Мая 1894 г.



18661.

ԴԱՐԻԲ ՄՇԵՑԻՆ

Կ Ա Մ

ԿՈՒԿԵԶԵՆՑ ԱԽՈՆ ՍՏԵՄԲՈԼՈՒՄ

Ա.

Երկու տարի էր Կուկազենց Աւոլի գործերը վատ էին: Առաջին տարին կարկուտն էր փչացըել նրա արտերը, այս տարի էլ երաշտն էր այլել և չորացըել նրա հունձը:

Աշունը վրայ էր հասել. Աւօն ոչ իւր և ոչ իւր անասունների համար ձմեռուան պաշար չունէր: Մշու գեղերում ուրիշի համար աշխատելով փող վաստակելու մասին մտածելն անգամ աւելորդ է, որովհետեւ ամեն տեղ աշխատող ձեռներն աւելի շատ են քան թէ աշխատանքը: Մերձակալ Մուշ քաղաքն էլ գիւղերից գերազանց չէր, այստեղ էլ ոչ մի վաստակի ճանապարհ չկար: Եթէ Աւօն միայնակ լինէր, կարելի է մի կերպ կառավարուէր, մի մարդու համար գլուխ սլահելը հեշտ է մինչեւ անգամ Մշու գիւղերում, բայց արի տես

որ նա ունէր մի պառաւ մայր, կին և մի
տղեկ: Միթէ կարող էր թողնել, որ սրանք
սովամահ լինէին:

Աստուած ողորմած է, մտածում էր նա
շատ անգամ և դեռ յուսով էր ապրում, բայց
յոյսն երկար չը կերակրեց նրա ընտանիքին
ու նա ստիպուած մի յուսահատական քայլ
արաւ: Աւօն վճռեց պարտք վերցնել: Նրան
օգնութեան հասաւ Ահմէտ աղան, որ բոլոր
կարօտեալներին փող էր տալիս շահով: Աւոյի
հինգ ոսկի պարտքը մի տարուան ընթացքում
կրկնապատկուեց և այդ էլ շնորհիւ այն բա-
նի, որ Աւօն Ահմէտ աղային չէր մոռանում
մասնակից անել իւր տան բարիքներին, տո-
ներին շլինքը ծռած նրան տանում էր
հաւ, ձու, գառը և իւր մօր ու կնոջ գոր-
ծուածքներից:

Այս տարի Աստուծով լաւ հունձ կունե-
նանք. մխիթարելով ասում էր Աւօյի մայրը:
Աւօն լաւ էր հասկանում այդ մխիթարանքի
արժէքը, նա վազուց հաշուել և տեսել էր,
որ եթէ առատ հունձ էլ ունենայ հազիւկա-
րող պիտի լինի իւր պարտքը վճարել:

Երբ Աւօն այդ մասին մտածում էր, սաս-
տիկ տիրում էր, մանաւանդ որ Ահմէդ-
աղան այլ ևս չէր կամենում սպասել. նա ըս-

պառնացել էր Աւոլի երկու կովը, եզներն
ու տունը պարտքի տեղ վերցնել։ Այս
սպառնալիքը Աւօն լսել էր նոյն իսկ Ահմէդ-
աղալի բերանից, որ բարամին սպասած ոչ-
խարը պարգև չը ստանալով իւր պարտատի-
քոջից, նորա վրալ թափել էր իւր սրտի բար-
կութիւնը։ Ահմէտի սպառնական ձայնից Ա-
ւօն գուշակել էր, որ նա անպատճառ կիրա-
գործէ իւր ասածը։

Աւոլի ընկերն ու բարեկամը, Բելախենց
Գեւօն, մի տարի էր, որ Ստամբոլ էր գնացել
աշխատանքի։ Աւօն իւր հոգսերից ընկճուած մո-
ռացել էր արդէն նրան, երբ մի նամակ ստա-
ցաւ Գեւոլից։ Աւօն նամակը տարաւ տէրտէ-
քին որ կարդալ։ Գեւօն Ստմբոլից գրում էր,
որ իւր գործն լաջող է, մի հարուստ վաճա-
ռականի մօտ գործի է և այնքան է վաստա-
կում, որ ամսական հարիւր զռուշ լետ է կա-
րողանում ձգել։

Երբ տէրտէրը Գեւոլի գրածները կար-
գում էր, Աւօն ոչինչ չէր մտածում, երբ նա
նոյնը իւր մօրն ու կնոջն էր պատմում, գար-
ձեալ ոչինչ մտադրութիւն չ'ունէր առանձին,
բայց երեկոյեան, երբ պառկեցաւ քնելու, մի
նոր միտք ծնեց նրա մէջ և երկար ժամա-
նակ չէր թողնում նրան. քնելու։

— Ի՞նչ է եղել քեզ, հարցը եց նրան Հռիփսիմէն, նրա ամուսինը, որ կէս գիշերին զարթնել էր և նկատել, որ Աւօն դեռ քնած չէ:

Ոչինչ պաասխանեց Աւօն: Բայց նա սըսալւում էր. նրան մի բան էր պատահել, Ստամբօլ գնալու միտքը նրա գլխում նստել էր ու չէր դուրս գալիս:

Եթէ ես մի տարով Ստամբօլ գնամ, այնքան կարող եմ աշխատել, որ թէ պարտքս կըտամ և թէ մի բան կը լետ գնեմ, մտմտում էր նա և խիստ ուրախ էր իւր այս նոր մտքի վրայ:

Սակայն երբ միւս առաւօտը զարթնեց և լիշեց իւր մտադրութիւնը, չը հաւանեց և աշխատում էր մտքիցը հանել Ստամբօլ գնալը:

Ո՞չ, ո՞չ, Ստամբօլ չեմ կամենում գնալ: Ի՞նչ պէտք է անեն մալրս և կինս, եթէ ես հեռանամ ալստեղից, ի՞նչ կ'լինի սրանց վիճակը, եթէ ես դարիթութիւն գնամ, ասում էր նա ինքն իրեն:

Նրան թւում էր թէ մի վատ բան է արել և սիրտը թեթևացնելու համար գնաց հարևաններից մէկի մօտ և խօսք բացարաւ գարնանալին ցանքի մասին: Իրաւ նրա սիրտը մի քիչ թեթևացաւ, բայց հենց որ հեռացաւ

դրացուց, նոյն միտքն էլի ծագեց գլխումը,
որ կասես մեխի պէս ցցուել էր և դուրս չէր
գալիս:

Այդ օրուանից Աւօն սկսեց աւելի տխրել.
Երբ նա դաշտն էր գնում, ոչինչ չէր տեսնում
իւր չորս կողմը, աչքերը չուռմ էր և մի կէ-
տի վրայ նայում. սրա վրան աւելացաւ և Ահ-
մէդի սպառնալիքն, որ վերջերս աւելի յաճախ
էր կրկնւում. բարեսիրտ աղան մեծ ցան-
կութիւն ունէր Աւոյի տուն և տեղը գրաւե-
լու: Այս սպառնացող վտանգը տանջում էր
Աւոյին և զարկուրեցնում, Ստամբօլ գնա-
լու միտքը հասունանում էր նրա գլխում ա-
ճելով ծաղկի արմատների նման, որ այնքան
աճում ու զարգանում են, մինչև որ տրա-
քացնում են ծաղկամանը: Այս՝ այդ միտքն
այնքան մեծացել էր, որ նրա գլխում էլ ու-
րիշ ոչ մի միտք տեղ չէր գտնում:

Մի առաւօտ, երբ Ահմէդ աղայի ծա-
ռան կրկին եկաւ փողը պահանջելու և իւր
տիրոջ սպառնալիքը կրկնեց, Աւոյի սիրտն այն-
պէս մղկտաց, որ արտասունքները աչքերը
լցուեցան: Ես պէտք է Ստամբօլ գնամ, ա-
սաց նա ինքն իրեն ու միան մի տարով, ոչ
աւելի:

Բայց ինչպէս ասէր նա այս իւր մօռն

ու կնոջը։ Երբ նա մտածում էր, որ պիտի
թողնէ նրանց, այսպէս էր ծանրանում նրա
սիրտը, որ կարծես մի մեծ քարի տակ են դը-
րել իւր կուրծքը ճնշում։

Զէ, չէ, ես Ստամբօլ չեմ գնալ, ես այս-
տեղ պիտի մնամ. մխիթարում էր ինքն իրան
ամբողջ օրը, բայց երեկոյեան երբ լիշում էր
Ահմէդի սպառնալիքը. Ստամբօլ գնալու միտ-
քը չէր թողնում նրան քնելու։

Անգուխ պարտատէրն ինքն եկաւ մի ան-
գամ և կրկնեց իւր սպառնալիքը, Աւօն էլ չը
դիմացաւ ու ասաց։

— Ի՞նչ ես շատ նեղացնում, եթէ մի տա-
րով գնամ Ստամբօլ, քո պարտքն էլ կըտամ,
փող էլ կունենամ։

— Վայ մեզ, վայ մեզ, նա մեզ անտէր է
թողնում, կանչեցին մայրն ու կինը միաբե-
րան։

Կանանց վայնասունը հետզհետէ ըարձ-
րացաւ, հարևաններ լացի ձայնը լսելով հա-
ւաքուեցան ու ներս թափուեցան իմանալու
թէ ի՞նչ է պատահել։

Դրացիք թերևս չը կարողանալին հան-
գըստացնել պառաւին ու իւր հարսին, եթէ
նրանց մէջ չլինէր Հռիփսիմէի քաւորը, ծե-
րունի Գրիգորը, որ իւր խելօք խոսքերով ա-

մենքին հանգստացրեց։ Նա հենց ինքը երեք
տարի Ստամբուլումն էր եղել և լետոյ դարձել
իւր կնոջ ու երեխայոց մօտ, բաւական էլ
փող էր բերել հետը։ Նա Խօսում էր ծանր
ու հանգարտ և աշխատում էր հաւատացնել,
որ Ստամբուլն այնքան էլ հեռու չէ և մի
քանի շաբաթում կարելի է հասնել այնտեղ։

— Իսկ ծովն ի՞նչպէս պիտի անցնի, չէ՞ որ
Ստամբուլը Սև ծովից այն կողմն է, հարցրեց
միամիտ Հռիփսիմէն։

— Այդ էլ հեշտ է, ծովը նա անց կը կե-
նայ մեծ նաւով, պատասխանեց Գրիգորն ու
սկսեց նկարագրել նաւը և պատմել՝ թէ ի՞նչ-
պէս են նաւով ճանապահորդում։

Քաւորի հեղինակութիւնը մեծ էր. կա-
նալք նորան հաւատում էին, ուստի քիչ հան-
դարնեցին, բայց Աւոյի շուտով ուղեռուելու
մասին մի խօսք անգամ լսել չէին կամենում։

Աւօն կարող էր հնձից լետոյ էլ ուղեռ-
ուել։

Զը նալելով այս ընդդիմութեան՝ Աւօն
ը փոխեց իւր միտքը. նա շատ լաւ գիտէր,
որ հնձից սպասելիք չունի, իսկ մինչեւ այդ
ժամանակ պարտքը պիտի մեծանալ և Ա.Հմէդ
աղան աւելի խստապահանց դառնայ. նա
վճռեց այլ ևս երկոր չը սպասել, մի նոր

մուրհակ տուաւ աղալին՝ խոստանալով տարուան գլխին բոլոր պարտքը Ստամբօլից ուղարկելու և մի շաբաթից յետոյ ճանապարհ ընկնելու պատրաստուեցաւ:

Բ.

Երբ Աւօն տուն դարձաւ քաւոր Գրիգորի հետ, մալըն ու կինը սկսան կրկին լաց լինել, նրանք ամբողջ օրը լալիս էին. Աւոյի սիրտը լիքն էր թախիծով, արտասունքը նրան խեղդում էր:

Այժմ նա սկսաւ ալդ հեռաւոր ուղեռութիւնից վախենալ: Նա խղճում էր և իւր պառաւ մօրը, մատաղատի ամուսնուն, նորածին մանկանը, որոնք միայնակ և անօգնական պիտի մնալին: Ամբողջ շաբաթը անգործ շրջում էր նա, աշխատելու ոչ մի ցանկութիւն չ'ունէր, պառաւն ու հարսն էլ գործ չէին կարողանում անել: Նրանք գրեթէ ամենեին միմեանց հետ չէին խօսում, այլ ապշած և մտամոլոր միմեանց էին նայում և արտասւում: Նրանց տունն ալնալէս լուռ էր, որ կարծես մի ծանը հիւանդ լինէր ալնտեղ պառկած:

Աւոյի ուղեռութիւնից մի երկու օր ա-

ռաջ Հոփիսիմէն առաւ նրա շորերը և տարաւ աղբիւրի մօտ լուանալու. այդ տեղ մի այնպիսի տխրութիւն պատեց նրան և կոկծով լցուեց սիրտը, որ ուշաթափ վայր ընկաւ. Նա առաւ Աւոլի հալաւը, կուրծքին սեղմեց ուժգին. թրջեց արտասունքով և մի այնպիսի կրակով վառուեց նրա սիրտը, որ մինչև այմժերեէք չէր զգացած:

Սէր ասածը նա չ'գիտէր թէ ի՞նչ է, երեք տարի առաջ էլ երբ ամուսնացաւ Աւոլի հետ, սէր չէր զգացել, բայց ալժմ նրա մէջ վառուեցաւ այդ բոցը. Նրա խելքն այլ ևս չէր բանում, այնքան զօրաւոր էր ալս նոր անիմանալի կերքը: Հոփիսիմէն զգում էր միայն իւր սրտում մի ալրուող ցաւ, որի պատճառն էր Աւոլի հեռանալը: Երեք ժամ շրունակ նստած էր նա աղբիւրի մօտ, երբ վերկացաւ տուն գնալու, սաստիկ լոգնածութիւն զգաց, կարծես մարմնի բոլոր անդամները ջարդուած լինէին: Աւօն շէմքում կանգնած էր, երբ նա եկաւ տուն, Հըռիփիսիմէի գունաթափ դէմքն ու արտասուալից աչքերը տեսնելով՝ նա գլուխը շուռ տուաւ միւս կողմը, այնպէս ցոյց տուաւ, որ ոչինչ չէ նկատում:

— Խղճուկ, նրա սիրտը մղկտում է, աղիք-

ները կտրատւում են, շշնջաց նա ինքն իրեն
և գնաց դեպի պարտէզը զովանալու, որով-
հետեւ նրա ներսն էլ այրւում էր:

Սյնտեղ պառկած մնաց նա մինչև մայրն
եկաւ և տուն կանչեց նրան կերակուր ուտե-
լու: Նա բան ուտել չկարողացաւ, որովհետեւ
կերածը նրան լեղու համ էր տալիս, իսկ ա-
մուսնու տխուր հայեացքը նրա սիրտը ճըն-
շում էր: Վերջապէս հասաւ երեկոն, վերջին
երեկօն, որ իւր հայրենի լարկի տակ պէտք
էր անցկացնէր: Այդ մի տխուր երեկոյ էր Ա-
ւոյի և նրա տնեցոց համար, բայց արևն այ-
նուամենալնիւ մայր մտաւ զուարժ ու ոս-
կեփայլ, ապա դուրս եկաւ արծաթափայլ
լուսինը պայծառ երկնքի վերայ, սոխակն ըս-
կսաւ գայլալել պարտիզում նոյնքան քաղց-
րաձայն և նոյնքան գրաւիչ ինչպէս ամենայն
գիշեր: Դրացիք ևս ուրախ էին, դուրսը լըս-
ւում էր երիտասարդների երգի ձայնը, նրանց
ինչ հոգն էր խեղճ Աւոն ու նրա սրտի թա-
խիծը: Այդ գիշերը նա շատ քիչ քնեց և
դեռ ծէգը չբացուած վեր էր կացել ճանա-
պարհի պատրաստութիւնը տեսնելու: Աւոյի
մայրն ու կինն էլ վաղ էին զարթնել, բայց
նրանցից և ոչ մէկը չէր խօսում, որովհետեւ
ցաւը կապել էր ամենքի բերանը: Մայրն և ա-

մուսինը լուռ ու մունջ կապեցին ճանապարհի պաշարը, մայրը ապա տուաւ նրան ճանապարհի համար փոխառած դրամը:

— Ա՛յս, ասես թէ գերեզման եմ իջնում, հեծելով գոչեց Աւօն: Երանի գիտենալիք թէ ինչ է անցնում սրտովս: Գիշեր ցելեկ ձեզ պիտի կարօտեմ և հանգիստ պիտի չունենամ: Մայրիկ-ջան, ողջ կաց և մի տրտմիր, մի տարուց կը վերադառնամ և այն ժամանակ երջանիկ կ'ապրենք:

— Ո՛հ, միայն շուտ դարձիր, շուտ. աչքիս լոյս, ասաց մայրը հեծկլտալով: Տես, ես արդէն պառաւ եմ և տխուր, ով գիտէ՝ թէ արդեօք Տէրն ինձ չի կանչիլ շուտով: Եթէ ես մեռնեմ, երբ դու այստեղ չըլինիս, չեմ կարող աչքերս հանգիստ փակել:

Ապա օրհնեց նա իւր որդուն և երեքը միասին սկսան աղօթել ծնկաչոք: Աւօն արտասուքը բռնել չկարողացաւ, իսկ երբ կանալք վայնասուն բարձրացրին, համբուրեց մօրձեռքը ու ամուսնու ճակատը, մօտեցաւ իւր ննջող մանկանը, համբոյրներ դրոշմեց նրա այտերին ու շտապով դուրս եկաւ տանից: Պառաւն ու հարսը մի քանի ազգականների հետ միասին ուղեկցեցին նրան մինչև գիւղի ծայրը, այնտեղից նա մենակ առաջ գնաց դէ-

պի Մուշ, ուր պիտի միանար Տրապիզոն գնացող քարաւանին:

Գ.

Մինչև Մուշ հասնելը նա այնքան էլ տրտում չէր, որովհետև ամենայն ինչ շրջակալքում ծանօթ էր նրան, մանաւանդ որ մըտածում էլ էր՝ թէ ամենայն վալրկեան կարող է յետ դառնալ: Բայց միւս առաւտը, երբ քարուանի հետ ճանապարհ ընկաւ դէպի Տրապիզոն, նա այնպէս տատանւում էր, որ անշարժ կանգնած մնաց ճանապարհի վրան և յետ սկսաւ նայել: Միայն այն ժամանակ սթափուեցաւ, երբ ընկերների ծաղրական խօսքերը լսեց:

— Այնպէս թթուել ես, որ կարծես ձեր գիւղի ողջ հարկը քեզնից են պահանջում, ինչ է եղել քեզ, հարցրեց վաճառականներից մէկը:

— Վախենում եմ այդքան հեռու ճանապարհից, պատասխանեց Աւօն:

— Այն ժամանակ տուն դարձիր և երեխիդ օրօրոցը օրօլիր: Ինչպէս տեսնում եմ լաւ

Երեխապահող կ'լինես, ասաց խօսակիցն ու
ամենքը սկսան բարձրաձայն ծիծաղել:

Այս ծաղրի խօսքերը Աւոյին սիրտ տուին
կըկին, և ցոյց տալու համար, որ այլ ևս չէ
վախենում պանդխտութիւնից, սկսեց երգել:
Հայրենիքից հեռանալու միտքն այժմ նրան
այնքան սարսափելի չէր թւում, որովհետեւ
իւր ընկերներն ամենքն էլ հայեր էին, դրան-
ցից շատերը երկրորդ և երրորդ անգամն էին
պանդխտութիւն գնում և տրտմութեան նշոյլ
չ'կար նրանց երեսին: Աւոն հետզհետէ մո-
ռացաւ իսկ որ հայրենիքից հեռանում է, ո-
րովհետեւ գրեթէ ամենքն էլ նոյն Մշու բար-
բառն էին խօսում և սուրբ Կարապետով էին
երդւում: Աւոյին այնպէս էր թւում, որ ինքը
ոչ թէ Ստամբոլ է գնում պանդխտութեան,
այլ ո. Կարապետ ուխտի: Այս մտքին նա
աւելի ևս ընդելանում էր այն պաաճառով,
որ կարաւանի մէջ ոչ մի տաճիկ, ոչ մի քուրդ
և ոչ մի եղդի չը կար, ամտնքն էլ հայեր էին
Միայն երեկոյեան գէմ, երբ Մշոյ դաշտն ա-
ներևութացաւ Աւոյի աչքից, նա կըկին տըխ-
ըեց, բայց լոգնածութիւնից երկար չը կարո-
ղացաւ հայրենիքի լիշտակներով զբաղուել,
այլ մեռելի նման քնեց: Միւս օրը կարաւա-

նը ճանապարհը արունակեց և հասաւ լեռնոտ
մի վայր, ուր ոչ մի գիւղ չէր երևում:

— Այստեղ պիտի զգոլշ լինենք քրդերից,
ասաց կարաւանի առաջնորդը և պատուիրեց
շուրջը դիտել: Ուղերները լուս էին, երկիւ-
ղը նրանց ամենքի սրտին տիրել էր և ինչպէս
չվախենալին, իրենց պաշտպանութեան զէն-
քերն էին միայն պանդխտական գաւազանները:

Միայն վաճառականներն ունէին զէնք,
այն էլ հակերի մէջ կապած: Իւրաքանչիւր
ստուեր և հեռուից լսուող ձայն գրաւում էր
ուղերների ուշքը: Այսպէս առաջ անցան
նրանք մի քանի ժամ, արդէն ամենայն եր-
կիւղ մոռացել էին և կրկին սկսել էին ու-
րախ ուրախ խօսակցել, որ յանկարծ հեռուից
սպառագինուած մի խումբ քրդեր երևացին:

— Անիծեալները վատ տեղ բռնեցին մեզ,
փախչելու հնար չ'կայ, ասաց կարաւանի ա-
ռաջնորդը, տեսնենք ինչ փրկանքով պիտի
ազատուենք:

Ամենքի դողը բռնել էր, քաղաքացի վա-
ճառականները գունաթափ իրենց կորուստն
էին ողբում, գիւղացի պանդուխտներից փոր-
ձառուները անտարբեր էին, որովհեաւ կորց-
նելու ոչինչ չ'ունէին: Քրդերի խումբը սրար-
շաւ յառաջ էր գալիս, նրանք թուով քարա-

ւանի մի քառորդն անգամ չէին կազմում, բայց
զինուած էին ոտքից մինչեւ գլուխ։ Քրդերը
շըջապատեցին կարաւանը, առաջնորդը գոռաց։

— Ո՞վ տեղիցը շարժուել է, գնդակակոծ
կը լինի, շուտ հանեցէք ձեր ոսկիքը...

Ամենքը լուռ էին, քրդերից մի քանիսը
իջան ձիաներից և սկսան խուզարկել ուղևոր-
ներին մէկ մէկ։ Վիզերը ծռած հալ գիւղացիք
ամենայն անպատութեան տանում էին։
Յանկարծ իրարանցումն ընկաւ կարաւանի մէջ,
երիտասարդ ուղևորներից մին քրդերի հայ-
հոյանքներին չ'դիմանալով՝ բռնցքով գետին
տապալեց նրանցից երկուսին։ Որոտացին հրա-
ցանները և յանդուգն երիտասարդը դիաթա-
ւալ գետին դլորուեց։

Այս տեսարանն էլ չը վրդովեց կարաւանի ան-
դամներին, նրանք սկսան իրենց կեանքը փըր-
կելու համար աւելի մեծ գին տալ։ Վաճա-
ռականներից ստացած ոսկիքն ալնքան կու-
րացրին քրդերի աչքերը, որ նրանք Աւոլի նը-
ման խեղճերին էլ չը խուզարկեցին, նրանք
լաւ գիտէին, որ հալրենիքից հեռացող պան-
դուխտները նիհար որսեր են, դրանց պէտք
էր վերադարձին կողոպտել... Քրդերը վերջա-
պէս աւարտեցին իրանց գործը և կողոպտուած
կարաւանը սկսաւ առաջ շարժուել։ Պանդըխ-



663-2009
(5204-38)

տութեան առաջին զոհը, բանհոգի եղած յանդուգն երիտասարդը ճանապարհի ափին լանձնուեցաւ հողին:

Կեանքի վտանգն անցնելուց լետոյ ամենքն էլ ուրախացան, կային այնպիսիք, որ նոր էին ափսոսում՝ թէ ինչու չըդիմադրեցին, մինչդեռ աւելի խոհեմներն Ս. Կարապետին էին վերագրում այս հրաշալի փըրկութիւնը:

Այո գիսլուածը կըկին վրդովեց Աւոյի միտքն ու սիրտն և նա սիրով լետ կը դառնար եթէ չ'վախենար միայնակ անելու այդ վտանգաւոր ճանապարհը:

Կարաւանն հասաւ վերջապէս Տրապիզոն: Աւօն ընկերների հետ միասին գնաց նաւահանգիստը, որ տեսնէ այն նաւը, որով Ստամբուլ պիտի գնար: Ծովի տեսքը զարհուրեցրեց Աւոյին. նրա սիրտը փղձկեցաւ, երբ լիշեց իւր հայրենիքն, նա դեռ ծով չէր տեսել, ուստի և այդ անհուն ջրերի վրայ նաւելը նրան անխուսափելի մահ էր թւում:

— Ա՛խ, ինչու չը մնացի մեր գիւղում, մեր տանը, ասում էր նա. Աստուած ողորմած է, կարելի կարողանայի պարտքս տալ և մօրս ու ընաանիքիս հետ ապրել, իսկ ալժմ պիտի կակարողանամ արդեօք Ստամբուլ անգամ հասնել:

Ընկերներ սիրու տուին նրան կրկին և
իրենց հետ միասին նաւ նստացըին։ Սկսեց
Աւոյի տանջանքը։ Նաւը ընդարձակ ծովը մը-
տաւ թէ չէ, փոթորիկը սկսաւ, նաւը մի կտոր
տաշեղի նման տատանում էր ալիքների մէջ։
Աւօն սարսափելի տանջանքներով պառկած էր
տախտակամածի վրան և անդադար աղաղա-
կում էր.—վայ ինձ, վայ ինձ. ինչու թողի
հայրենիքս, միթէ նրա համար, որ ծովի
վրայ կորչեմ։

Ալիքները թափւում էին տախտակամածի
վրայ, ուղեռներին իջեցըին նաւի նկուղը, ուր
ձկների նման միմեանց վրայ էին թափուած
նրանք և այնպէս էին տնքում, որ կարծես
մերձիմահ հիւանդներ լինէին։ Մութը գիշերը
վրայ հասաւ, հողմը սուլում էր, ալիքներն
ուժգին բաղխում էին նաւի կողքերին, նաւն
անդունդը գլորում և մի կողմից միւս կողի վրայ
ձգում։ Աւօն ամենայն ինչ կորած էր համա-
րում և թմրած ընկած էր, նա աղօթք էր մըր-
մնջում Ա. Կարապետին օգնութիւն կանչում։

Վերջապէս առաւօտը բացուեցաւ, բայց
փոթորիկը չը դադարեց, հողմերը կրկին շա-
ռաչում էին և նաւը կրկին տատանում էր։
Զուրը ծածկում էր տախտակամածը, ուստի
նաւի նկուղի բերանը փակեցին, ներսի օդն

անտանելի և խեղդուկ էր, ուտել խմելու մասին ոչ ոք չէր մտածում։ Ուղեորութեան երկրորդ օրն Աւօն այնպէս թոլ և հիւանդ էր, որ մտածում էր՝ աւելի լաւ կը լինէր եթէ մեռնէր։ Ուժասպառ լինելով բոլորովին, խորը քնի մէջ ընկաւ և երբ միւս օրը զարթեց, փոթորիկն արդէն դադրել էր։ Աւօն կրկին տախտակամածի վրայ բարձրացաւ, տեսաւ ընդարձակ ծովը, որի եզերքը չէր երեսում, իսկ նորա գլխի վերևը ձգւում էր անսահման երկինքը։ Յիշեց Աւօն Մշու դաշտը, իրենց գիւղը, հալրենի խրճիթն ու պարտէզը, միտքն ընկան մալրը, ամուսինն ու տղան, արտասուքը փայլեց նրա աչքերում և խորը լոգւոց հանեց։ Հէնց պանդուխտը շուրջը նայեց ամենայն ինչ օտար էր... այնպիսի մի զգացումն ունեցաւ, որ կարծես, այլ ևս երբէք պիտի չը տեսնի հալրենիքը, կարծես ճակատագիրը նրան աշխարհիս ծալրն էր քշում։ Ծովալին տկարութիւնն անցաւ, ալժմ նա առողջ էր, բայց տխուր, մռայլ և տրտում մտքերը հալածում էին նրան, աչքերը լառած ծովի մակերևոյթին ժամերով անշարժ նստում էր նա տախտակամածի վրայ։ Զորըորդ օրը երկինքը պարզուեց, արևը փայլեց կրկին և ծովի երեսը պապղում էր հալելու նման։

—Այսօր ճաշին Ստամբօլ կը հասնենք,
ասաց Աւոյին ընկերներից մէկը. երբ նա այս
լսեց, կըկին սիրտ տուաւ, որովհետև անհամ-
բեր սպասում էր, թէ երբ պէտք է մէկ էլ
ցամաքի վրայ ոտք դնէ:

Չորս օր ծովի վրայ տանջուելուց լետոյ
ցամաք դուրս գալու միտքը խրախուսում էր
Նրան, նա վստահութիւն էր ստանում, որ
Ստամբօլում ամենայն ինչ լաւ պիտի լինէր:

¶.

Մի քանի ժամից լետոյ նաւը մտաւ Բոս-
փորի նեղուցը: Աւօն այնպիսի հրաշալիքներ
տեսաւ հեռուից, որ կարծես կախարդական
աշխարհումն է: Իւր կեանքումը նա մի հատ
պալատ անգամ չէր տեսել, ալստեղ նրա աչ-
քերին հարիւրաւոր պալատներ երեացին Բոս-
փորի երկու ափերին: Քանի նաևն առաջ էր
ընթանում, տեսարանն այնքան սքանչելի էր
դառնում: Աւօն նկատեց մի քանի մանր նա-
ւակներ, որ լիքն էին շքեղ. հագնուած և
զարդարուած տիկնանցով և պարոններով, ու-
րոնք ամենքն էլ Աւոյի աչքում երջանիկ ու
հարուստ մարդիկ էին:

— ծշմարի՛տ է, որ մարդ այստեղ կարող
է շատ փող աշխատել. մտածում էր Աւոն
ինքն իրեն և առաքին անգամ գոհ եղաւ,
որ վճռել էր Ստամբօլ գնալ:

Աւոյի զարմանքին չափ չ'կար, երբ նաւը
ծռուելով նորա աչքին երեաց Ստամբօլը իւր
հարիւրաւոր գմբեթներով, մինարէներով և
պալատներով. նա կանգնած մնաց քարացածի
պէս: Մեծապանծ տեսարանն հետզհետէ մօ-
տենում էր և ընդարձակւում, վերջ ի վերջոց
նա չըգիտէր թէ որ կողմը դարձնէ իւր հայեաց-
քը: Յանկարծ ուշքի եկաւ նա երբ նաւը Ղա-
լաթիոլ աղտոտ և ծխամած ափին կանգ առաւ
և ընկերները նրանասացին, որ պէտք է իջնեն
նաւից:

Աւոն ձեռքը տարաւ կրծքին, ուր կարած
էր նրա դրամի մնացորդը: Քառասուն դռուշ,
որ նա այնտեղ կարել էր, անկորուստ մնացել էր:
Նա շալակեց իւր պարկն ու իջաւ մի նաւակ, որը
պէտք է նրան ցամաք հանէր: Յամաք դուրս
գալուն պէս մի քանի պաշտօնեաներ մօտե-
ցան նրան և իւր ընկերներին, մի քանի հարցում-
ներ տալուց լետոյ սկսան խուզարկել ալդ խեղ-
ճերին: Մաքսատան պաշտօնեաները ապրանք
չէին փնդուում նրանց մօտ ալլ նամակներ ու
թղթեր, որ կարող էին վտանգաւոր լինել...

Աւօն կարծես երազումն էր, մէկ էլ տեսաւ, որ ինքը մի նեղ և ցեխոտ փողոցսւմ կանգնած է, ուղեկիցներն անհետացել էին ալդ նեղ և բազմամբոխ լարիւրինթոսում։ Առաջին միտքը, որ ունեցաւ, իր ընկեր Գէօրգին, Բելախենց Գեւոլին, փնտուելն էր, որի շնորհիւ նա յոյս ունէր աշխատանք ճարել։ Բայց բնչպէս գտնէր նրան. 'յուսահատ աչքերով սկսաւ դէս ու դէն նայել, բայց այնքան բազմութեան մէջ Գեւօն չը չկար…'

Աւօն սկսաւ դանդաղաքայլ յառաջ գընալ, որոնում էր իւր ուղեկիցներին և յոյս ունէր որևէ հայրենակցի հանդիպել, ԿարաՔէոլի հրապարակի մօտ մի քանի համալներ տեսաւ, որ հայերէն էին խօսում, ուրախացած դարձաւ նրանց ու հարցըեց։

— Զէք իմանում Բիլախենց Գեւօն ուր է բնակւում։

— Ո՞րտեղացի ես, հարցըին նրան համալները։

— Մշեցի. Գեւօն իմ դրացին է, նա մի մեծ աղայի մօտ է ծառայում։

— Ի՞նչ է նրա աղայի անունը։

— Զեմ իմանում։

— Հա, հա, ծիծաղեցին համալները, եթէ ալդ չես ինանում, շատ երկար կ'որոնես նրան՝

խելքդ ի՞նչ է կտրում, Մշնումն ես, ի՞նչ է, որ-
տեղ բոլորը մէկ մէկու ճանաչում են:

Նրանք երեսները դարձրին և Աւօն տ-
ռաջ գնաց ու հասաւ հրապարակը: Ամբոխի
բազմութիւնը բոլորովին շփոթեց նրան, խա-
նութների կողմը քաշուեցաւ, լանկարծ նրա
աչքին ընկան սառաֆները, որ ոսկիքն և
արծաթը առաջները դարսած նստած էին:
Աւօն կեանքում ալդ քան փող չէր տեսել
ուստի ապշած կանգնել և նայում էր:

— Ի՞նչ ես կամենում հարցըց նրան սառ-
ռափը:

— Ոչի՞նչ, պատասխանեց Աւօն, ես որո-
նում եմ մեր գեղացի Գեւոյին:

— Ա՛յ, այնտեղ է կենում Գեւօն, ասաց
սառափը ծիծաղելով և ցոյց տուաւ մի հա-
րուստ և մեծ խանութ ահագին հայելի ա-
պակիներով: Ալդ խանութի ճակատին մեծ
մեծ տառերով գրուած էր «Գէորգ Դադաշեան»
բայց Աւօն խօմ կարդալ չգիտէր:

— Հանաք ես անում, եղբայր, ասաց նա,
Գեւորգը չէ կարող այնտեղ լինել, դա մի ու-
րեշը կը լինի:

— Ի հարկէ քո Գեւօն չէ, խելքդ ի՞նչ է
կտրում, կըկնեց սառափը, դէ՞ն քաշուի՞ր, ա-
ռաջս մի բռնիր:

Ամօթահար և տրտում առաջ գնաց Աւոն և հասաւ մի մեծ փողոց, ուր կալին հոյակապ տներ:

Կարելի է այստեղ է ապրում այն մեծ պարոնը. որին Գեւոն ծառայում է, մտածեց Աւոն, բայց չը վստահացաւ ոչ ոքի բան հարցնելու, որովհետև ամենքն էլ շքեղ հագնուած պարոններ ու տիկնալք էին: Աւոն դարձեալ վայր իջու Ղալաթա:

Այսպէս թափառեց նա մինչև երեկոյ և ասես բնազգմամբ կանգ առաւ վերջապէս մի աղքատին գինետան առաջ, որի տէրը պատահմամբ հալ էր: Աւոն ներս մտաւ. մի մասթիքա խմեց և զրուցասէր գինեպանին պատմեց իւր գլխի անցքը:

Ի՞նչ մեծ եղաւ Աւոլի ուրախութիւնը, երբ գինեպանը յայտնեց, որ ինքն էլ մըշեցի է, բոլոր մշեցիք իւր գինետուն են յաճախում և լաւ է, որ նա իւր մօտ է եկել:

Հայրենասիրութիւնն այն աստիճան ու գեորեց գինետան տիրոջը, որ նա իւր հիւրին ձրի կերակուր և խմելիք առաջարկեց ու նրա կենացն էլ խմեց: Աւոն սկսաւ Գեւոլի մասին հարձու փորձ անել:

— Գեւոներ շատ կան այստեղ, պատաս-

խանեց գինեպանն, ինչպէս է քո Գեւոլի ազգանունը:

— Բելախենց:

Բելախենց Գեւօ, հա, ճանաչում եմ, նա երբեմն գալիս է ալստեղ ընկերների հետ տեսնութելու, բայց թէ ուր է ծառալում, չը գիտեմ:

Աւոլի սիրտը վերջապէս հանգաստացաւ, նա մի մարդ էր գտել, որ ճանաչում էր իւր Գեւոլին: Գինետունն հետզհետէ լցում էր, համալները կամաց կամաց հաւաքւում էին, Աւոլի ականջին էին հասնում իւր մայրենի, Մշու բարբառի հնչիւնները: Աւօն այլ ևս օտար չէր զգում իրեն: Համալները ոկաան ընթրել, մասթիքան տաքացրեց նրանց գլուխը, ամենքն էլ զուարթ էին:

— Արի դու էլ խմիլ մեզ հետ, ինչ ես տխուր նստել, դիմեցին նրանք Աւոլին: Երբ համալներն իմացան որ նա նորեկ մշեցի է, էլ հարց ու փորձին վերջ չեղաւ, ամենքն էլ լուր էին կամենում իրենց սիրած հայրենիքից, գիւղից և մերձաւորներից: Հայրենեաց լիշտակները նորոգուեցան, խմիչքը ոգևորեց պանդուխտներին և «Կռունկ ուստի կուգաս» թռաւ ամենքի կրծքից: Աւօն երգեց նրանց հետ միասին և նրա վերքերը կրկին բացուեցան:

— Երկու ամսից Աստուծով տուն կը դառնամ, ասաց Համալներից մէկը:

— Ես էլ աւելացրեց մի ուրիշը: Բարի ճանապարհ, մաղթեցին ամենքը և բաժակները չըխկացրին:

— Ա՛խ ինչ երջանիկ էք, ասաց Աւօն, ով գիտէ, ինչքան ժամանակ պիտի մնամ այստեղ այնքան փող վաստակեմ, որ պարտքս վճարեմ: Նա կրկին խորասուզուեց իւր մտքերի մէջ: Երբ Համալները հեռացան և գինետունը դատարկուեց, չգիտէր ինչ անէ: Գինետան տէրը խղճաց նրան, թոյլ տուաւ այդ գիշերն այնտեղ անցկացնելու և բարի գիշեր մաղթելով, հեռացաւ խանութի յետելը:

Ե.

Աւօն միւս առաւօտը կրկին սկսաւ թափառել և իւր բարեկամին որոնել, որոհետենրա միջոցով յոյս ունէր շուտով գործ գտնել: Ամբողջ օրը վեր վալը շրջեց Ղտլաթան և յոգնած ու դադրած երեկոյին եկաւ իւր Հայրենակցի խանութը:

Գիտես ինչ կայ, բարեկամ, ասաց գինե-

պանը, կամենաս քեզ համար վաղը գործ կը
գտնեմ, բայց ծանր գործ է:

— Ոչի՞նչ, ամենածանր աշխատանք էլ
լինի, յանձն կառնեմ, որովհետեւ ես փող եմ
ուզում աշխատել:

— Այսօր երկու անգլիական նաւեր են
եկել, դու պէտք է բեռը դատարկես ուրիշ
մշակների հետ միասին: Ահա շուտով կը գան
այն համալները, որ այդ գործն յանձն են
առել, դու վաղը կարող ես նրանց հետ գոր-
ծի գնալ: Մի անգամ գործի գնացիր, այնու-
հետև հեշտ է, միշտ կը կանչեն քեզ վաճա-
ռականները:

Միւս օրը Աւօն համալների հետ գործի
գնաց: Նաւից բեռը ցամաք կրելը շատ ծանր
գործ էր, Աւօն իւր կեանքում երբէք այդ-
քան ծանրութիւն չէր տարել իւր մէջքով,
բայց նա չէր տրտնջում, որովհետեւ նրա նը-
պատակն էր փող վաստակել, մանաւանդ որ
իւր ապրուստի համար էլ օրական, մի քանի
զուուշ պէտք է ունենար: Մի քանի օրում
այդ նաւերը դատարկեցին, յետոյ մի այլ նաւ
դատարկելու կանչուեց Աւօն, այնպէս որ նա
իւր օրտկան ապրուստը վաստակում էր, բայց
դրամ վաստակելու մասին խօսելն անգամ ա-
ւելորդ էր: Ամենադառն աշխատանքից յետոյ

Հազիւ իւր քաղցն յագեցնելով՝ նա կարողա-
նում էր միայն օրական մի դուռսւշ յետ ձը-
գել։ Գեւոլին ալլ ևս չէր փնտրում նա, ժա-
մանակ էլ չունէր դրա համար։ Մի երեկոյ
երբ նա իւր հալրենակցի գինետունը մտաւ,
տէրն յայտնեց նրան, որ Գեւօն այնտեղ է
եղել և կըկին կը գալ նրան տեսնելու։ Երբ
մի կէս ժամից յետոյ Գեւօն ներս մտաւ, նա
երեխալի նման ուրախացաւ և նրա վզովն ըն-
կաւ։

— Ի՞նչ ուրախ եմ քեզ տեսնելով, ասա՛,
ինչպէս են մալրս, քոլրս... Հարցումների մի
տարափ տեղաց Գեւօն նրա գլխին։

— Ո՞հ, եթէ գիտենաս՝ թէ որքան եմ կա-
րօտել հայ ըենիքիս, ծնողներիս։ Միւս տարի
տուն եմ դառնալու, որովհետեւ, թէպէտ ալս-
տեղ փող էլ աշխատում եմ, բայց կեանք չեմ
տեսնում այս օտարութեան մէջ։ Անբողջ գի-
շերը միասին էին նրանք և շարունակ հալրե-
նիքիցն էին խօսում. Գեւօն խօսք տուաւ աւելի
թեթև գործ գտնելու իւր բարեկամի համար։
Աւօն շատ ուրախ էր, որ մի ալդպիսի պաշտ-
պան գտաւ վերջապէս, որը սակայն հազիւ եր-
կու ամսում կարողացաւ իւր խոստումը կա-
տարել։ Աւօն գործ ստացաւ մի հացթուխի
մօտ, նա կարիք չունէր ալլ ևս ամենայն ա-

ռաւօտ հրապարակ վագել և սպասել, թէ
ով կը վարձէ նրան։ Նա այնքան էր վաստա-
կում, որ շաբաթական 20—30 և երեմն ա-
ւելի դուռշ լետ կարող էր ձգել և շուտով
ժողովել այն գումարը, որ իրեն պէտք էր։
Նրա կերակուրն էր հաց ու սոխ։

Այսպէս անցան ամառն ու աշունը, ե-
կաւ ու անցաւ ձմեռն ևս, Աւոյի խնայած գու-
մարն աճում էր, բայց աճում էր և նրա վերա-
դարձի ցանկութիւնը ու մաշող կազոտը։ Միշտ
իւր բարեկամին ասում էր։ Դեռ այսքան ու
այնքան է պակաս որ դումարը լրանալ, հենց
լրացաւ թէ ոչ, մի ամիս էլ կ'աշխատեմ, ճա-
նապարհի ծախք կը հաւաքեմ և այն ժամա-
նակ Աստուծով ճանապարհ կ'ընկնենք։

— Անպատճառ, միասին կ'երթանք, որով-
հետև պանդխտութեան հացը դառն է, կա-
րօտն ինձ մաշում է օրէցօր։

Ամէն կիւրակէ երկու բարեկամները հան-
դիպում էին թէ եկեղեցում և թէ ալլուր և
խօսում, ծրագիր էին կազմում և օրերն էին
համարում։

— Այժմ մեր գիւղում գետինը հերկում
են, ասաց մի օր Աւօն Գեւոյին. արդէն գա-
րուն է. ով պէտք է արգեօք այս տարի իմ
արտն հերկէ։ Աւոյի անհամբերութիւնը աճում

էր. նա առաջուան նման ամիսներ այլ շաբաթ-ներն ու օրերն էր համարում և շարունակ այն հրճուանքի մասին էր խօսում, որ իւր վերադարձը պիտի պատճառէր իւրայիններին:

Յուլիսի վերջին Աստուծոյ օգնութեամբ տանը կ'լինիմ արդէն, ասում էր նա, Ճիշդ հնձի ժամանակ կը հասնեմ և իմ հունձս ես ինքս կ'անեմ, դրացիների մօտ էլ աշխատելով մի բան կը վաստակեմ:

Մայիսի կէսն արդէն անցել էր, լունիսն էլ հեռու չէր, որ Ստամբոլում և ուրիշ զատ տեղերում խօլերան լայտնուեցաւ: Առաջին օրերն քիչ էր խօսւում ալդ մասին Աւօն էլ ամեննեին չէր վախենում: Մի օր սակայն հիւանդացաւ հացագործի մշակներից մէկը և միւս օրը մեռաւ: Աւօն վազեց Բելախենց Գելոյի մօտ և համոզում էր նրան շուտով հեռանալ քաղաքից:

— Ո՞վ գիտէ, կարելի է ալդ ժանտ հիւանդութիւնով էլ վարտկուենք, եթէ մնանք, ասում էր նա:

— Աստուծ մի արասցէ պատասխանեց Գէւօն. Թէև երկու շաբաթ էլ մնալ էի կամենում այստեղ, բայց երբ դու կամենում ես, այն ժամանակ կարող ենք հէնց առաջիկայ գնացող նաւով սւղկորուել:

Բայց հիւանդութեան պատճառով նաւելի հաղորդակցութիւնը շատ անկանոն էր և առաջիկալ նաւը մի շաբաթից լետով միայն պիտի ուղևորուէր: Այս լետաձգումը տրտմեց Աւոլին, նա աւելի անհամբեր դարձաւ քան մինչև այժմ էր, իսկ անհամբերութիւնը աւելի ևս էր շատացնում նրա երկիւղը:

— Գիտես, ասաց նա մի երեկոյ Գեւոլին, ինձ թւում է՝ թէ ես մեր հայրենիքն այլ ևս չեմ տեսնելու:

Ալդ թնչ ես խօսում, կանչեց Գեւօն, չորս օրից նաւը ճանապարհ է ընկնում և մինչեւ այն օրը միտքդ մի պղտորիլ և լուսդ մի կտրիլ:

Աւօն ջանք էր անում երկիւղը սրտից հանելու, բայց չէր կարողանում: Ամենայն առաւօտ ուրախութեամբ գործի էր գնում, անցած օրուան ծանրութիւնը կարծես մի մեծ վէմի նման ընկնում էր նրա ուսերից, բայց երեկոյին երբ մտնում էր կրկին մշեցիների ընակած խանն ու իջնում ընդհանուր ննջարանի տեղ ծառալող նկուղն և նորանոր մահուան լուրեր էր առնում, կրկին ծանրանում էր նրա սիրտը: Հայրենիքը չը տեսնելու երկիւղն հետզհետէ բռնում էր նրա սիրտն ու նա բարոյապէս ընկճռում էր: Աւօն վերջին շաբաթը հանգիստ քուն անգամ չունէր

Ճարակող Հիւանդութեան սարսափելի տեսա-
րանները երազումը կըկին բացւում էին նրա
առաջեւը: Քանից արգէն երևացել էր նրան
մայրն երազում, քանից նա երազի մէջ ճա-
շակել էր վերադարձի քաղցրութիւնը, երբ
յանկարծ ալդ բերկրալի երազների փոխարէն
մահուան տեսարաններ սկսան պատկերանալ
նրան: Երբ երեկոյեան խանն էր մտնում ա-
ռաջ, լսում էր ընկերների պատմած արկած-
ները, հայրենիքից լուրեր էր առնում, մի
վայրկեան ազատւում էր օրուան ճնշող հոգ-
սերից, իսկ այժմ ալդ ուրախութեան փոխա-
րէն ամենալն օր նոր նոր գժբախտութիւն-
ներ էր լսում, ծիծազի և անմեղ կատակների
փոխարէն ընկերակիցների ողբն ու կոծն էր
լսում: Մշեցի համալների բազմամարդ խանն
հետզհետէ ամայանում էր, շատերն երկիւղից
արգէն փախել էին, իսկ Աւօն դեռ դիմանում
էր: Գեւոյի հետ տեսնուելու երկրորդ առաւօ-
տը Աւօն հազիւ կարողացաւ գործի գնալ.
Նրան այնպէս էր թւում, որ խանի նեխած
օդիցն և անքուն գիշերուանիցն է այնպէս ջար-
դուած, ուստի ծովափը գնաց, մի կարօտակէզ
հայեացք ձգեց ծովի վրայ, միտքը թռաւ, հե-
ռու, հեռու, դէպի Մուշ, դէպի իւր գիւղը:
Բայց արգէն գործի գնալու ժամանակ էր.

շտապով հասաւ հացագործի տունն ու սկսաւ
աշխատել։ Աւոյի գլուխը ցաւում էր, նա կէ-
սօրին այլ ևս ոտքի վրայ կանգնել չէր կա-
րողանում, սիրտն սկսում էր տակն ու վրտչ
լինել։ Ընկերներն այդ նկատեցին, վրայ հասաւ
և հացավաճառն ու իսկոյն բժիշկ կանչեցին։
Թաղական բժիշկը Աւոյին ո. Փրկիչ փոխադ-
րել կարգադրեց, նա վարակուել էր խոլերայով։

Երբ Աւօն ուշքի եկաւ, արդեն Փրկչի
հիւանդանոցումն էր, նա նոր զգաց իւր վի-
ճակը, յուսահատութիւնը տիրեց նրան։ Յա-
ջորդ օրը բժիշկը մխիթարեց նրան, յոյս տուաւ
որ կ'առողջանալ, բայց հիւանդն ամենայն
յոյս կտրել էր, նա ճակատագրին հաւատում
էր, ինքն այլ ևս հալրենիք չէր վերադառ-
նալ։ Միւս օրը պէտք է մի նաւ ուղևորուեր
դէպի Տրապիզոն, Գեւոն եկաւ փնտռելու իւր
ընկերոջը, նրան այդ ուրախառիթ լուրն հա-
ղորդելու, բայց որքան եղաւ նրա յուսահա-
տութիւնը, երբ լսեց Աւոյին պատահած թը-
շուառութիւնը։ Գեւոն մի վայրկեան սարսա-
փից կարկածած մնաց. ապա լիշեց խեղճ Ա-
ւոյի վերջին խօսքերը, դառն արտասուեց և
կամեցաւ իւր անբաղտ հալրենակցին տեսնել։

— Ո՛չ, ես Աւոյին այստեղ մենակ չեմ
թողնիլ, ես նրան անպատճառ պիտի տեսնեմ,

ս. Կարապետը անկատար չի թողնիլ նրա մուրազը, կարելի է նա կ'առողջանալ և միասին կուղևորուենք Հայրենիք:

Գեւոն չ'նկատեց անգամ թէ բնչալիսի արագութեամբ հասել էր ս. Փըկիչ, նա խկոյն տնօրէնի գրասենեակը մտաւ և հարցրեց Առոլին:

— Դու երևի Բելախենց Գեւոն ես, ասաց տնօրէնը:

— Ալո՞, իմ անունս Գեւօ է:

— Խեղճ ընկերդ շարունակ քեզ էր ուղում, նրա վիճակն այսօր վատացաւ, մի քանի ժամ է արդէն, որ վախճանուել է. նա մի ծրար յանձնեց քեզ տալու համար, խնդրեց որ իւր մօրն հասցնես:

Հինգ օր յետոյ Բելախենց Գեւօն նաւ նստաւ դէպի Հայրենիք ուղևորուելու, Ստամբուլը նրան մի գերեզմանոց էր թւում, նա մի առ մի յիշում էր իւր պանդխտակիցներին, որոնք փող վաստակելու յուսով ալդ տեղ էին եկել և ալժմ օտար սառն հողի տակ հանդչում էին: Իւր վերադարձն անգամ այնքան չէր ուրախացնում նրա սիրտը, որովհետեւ շատերի մահուան գուժաբեր ինսելու միտքը նրան սարսուռ էր պատճառում:

Առանձ Առաջը.



